№ 46 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 18 1895 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 18 № 46

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրան. կէս տարուանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Արտասահմանից փոխի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով։ «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարուանը վեց դրան։ Արտասահման ի համար 3 բուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 բուբլի կամ 5 ֆրանկ։

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետևեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները. այլապէս չեն ընդունվիլ։ Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղուած թղթակցութիւնները։

Ապառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում։

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սպահանի ամենափրկիչ վանքը. Հայկական հարցի մասին.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Նոր-Ջուղայից. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կերպարանափոխութեան ազդեցութիւնը գիտութիւնների վրայ։

ՍՊԱՀԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

III

Խօսելով Սպահանի Ամենափրկիչ վանքի մասին, մենք անցեալ անգամ (տես Շաւիղ № 39) մատնանիշ արինք այն փաստի վրայ որ վանքը պէտք է ունենար տարեկան մօտ 10000 թուումանից աւելի եկամուտ իր կալուածներից, կալուածներից, նուիրակութիւններից նուիրաբերութիւններից և այլն։ Նշանակեցինք այն փաստը նոյնպէս որ երկար տարիներ այդ եկամուտի մասին ժողովրդին խաբելուց յետոյ, միայն վերջին երկու տարիների ընթացքում, Եսայի եպ. առաջնորդութեան ժամանակ, հրապարակ հանեցին մի մուրթ, ոչինչ բան չը պարզող երկու հաշիւներ, որոնց մէջ վանքի տարեկան ընդհանուր եկամուտը ցոյց է տրուած ոչ աւելի քան 4—4500 թուման, իսկ պատրաստի գումար 900։

Այստեղ պարզ է այն որ վանքը, ընդունակ պահելու շատ ազգային հաստատութիւններ, կերակուր է տուել միայն զանազան պարտաւորեալների, հրատարակել իր առաջնորդների գրպանը, իրեն շրջապատող ազդեցիկ աղաների գանձը։

Ոչ մի կասկած չէ երևում որ տասնեակ տարիների ընթացքում Գրիգորիս եպիսկոպոսը մրցել է վանքը իր գրպանում և նրան լետին դրութեան հասցրել. բայց և գրեթէ կարելի է հաստատ ասել որ Գրիգորիս եպիսկոպոսի հետ ծրծել են վանքին այնպիսի աղաներ, որոնք այսօր նրա շնորհիւ հարստութիւն են դիզել, որոնք ամէն մի Ղաշաասպահանջից կամ ուղիղ ղեկավարից սարսափելով դպրաններ են լարում նրանց դէմ, զզուեցնում նրանց և իրենք մնում միշտ անպատիժ, վանքի եկամուտների ծծիչ...

Մեր № 39-ի մէջ ցոյց տուած հաշիւը պարզում է որ վանքը չէ կարող ունենալ 10000 թուումանից պակաս եկամուտ։ Տեսնենք այժմ թէ նա որքան ծախսուն տարեկան և այնուհետև ընթերցողը թող դատի թէ որպիսի անիրաւութեամբ կլանվում է Սպահանի մէջ գտնուող սաղ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

Արդեօք տիեզերային ուրիշ աշխարհներն էլ միևնոյն բնական օրէնքներն ունին ինչպէս մեզը։ Այս հարցին պէտք է դրական կերպով պատասխանել, որ միւս աշխարհները նոյն տարրերից պիտի բաղկացած լինեն, ինչ տարրերից որ մեր աշխարհը (մեր արեգակային սիստեմը) հեմնելով այն իրողութեան վրայ, որ նիւթը և ոյժը անբաժան բաներ են՝ պիտի հետևցնել նաև, որ նման նիւթերի ոյժերը նոյնպէս նման կ'լինեն. ուրեմն և նման ոյժերի արտայայտութիւնները նոյնպէս նման կ'լինին։ Լուսալոյծ գործիքներով (sceptrale) գիտնականները հետազօտել են ուրիշ շատ արեգակների լոյսը և լոյսից կարողանալով եզրակցնել նրանց նիւթը, հաստատել են որ նրանք մեր սիստեմի նիւթի նման նիւթից են կազմած և նոյն օրէնքներով են զեկավարվում։

Այս գիտը նպաստում է այն հաւանականութեանը, որ բոլոր արեգակնասիստեմները միևնոյն ահագին տարածութիւն ունեցող, տիեզերքը գոյացնող գազանման խաօսից են առել իրանց սկզբնական ծագումը և որ արեգակները (ինչպէս մոլորակները) իրենց շուրջ պտտում են մի մեծ արեգակի շուրջ։ Յայտնի է արդէն, որ արեգակը մի տեղում կանգ չի առած, այլ միշտ տեղափոխելով առաջ է գնում։

Այստեղ ակամայ հարց է ծագում, արդեօք միւս անթիւ աստղերի վրայ, որոնք բնութեան նոյն օրէնքներին են ենթարկուած՝ կենդանի արարածներ, մեզ նման մարդիկ կան թէ ոչ։ Շատ մեծ անհամեմատութիւն կլինէր մեր կողմից, եթէ յանդգնէինք մտածել որ մենք, փոքրագոյն աստղերից մէկի վրայ ապրողներս, տիեզերքի անհունութեան մէջ միակ շնչաւորներն ենք, միակ ոգով օժտուածները։

Երկրագնտիս վրայ կեանքը կախուած է ածխածնի որոշ և շատ բարդ բաղադրութիւնից թթուածնի, ջրածնի, բորոկածնի և այլ տարրերի հետ և գլխաւորապէս՝ սպիտակուց (albumine) նիւթերից։ Այս բոլոր նիւթերը մինչև անգամ դեռ եռացման կէտին չհասած ապականվում են. նոյնպէս կեանքի պայմանները դադարում են գոյութիւն ունենալուց, երբ օդը դանվում է շարունակ սառոյցի կէտից ցած։

Տիեզերքի տարածութեան սառեցնող ցրտութեան և արևի սարսափելի տապի միջև գտնուած անհեթեթ հեռաւորութեան մէջ կայ միայն մի շատ փոքր տարածութիւն, որտեղ հնարաւոր է օրգանական կեանքի գոյութիւնը։ Բացի դրանից պէտք է ածխածին, ջուր, և բորոկածին բաւարար չափով և որոշ յարաբերութեամբ գտնուին այնտեղ։ Բոլոր արեգակները իրենց ջերմութեան պատճառով չեն կարող կեանք առաջացնել։

Դիտաւոր աստղերը երկար ժամանակ արեգակից հեռու մնալով սառում են և կենդանու անհրաժեշտ պայմաններից զրկվում։ Աստղերի թուում մնում են միայն մոլորակները, որոնց հանգամանքները կարող են կեանք առաջ բերել և նրա գոյութիւնը պահպանել։ Մեր մոլորակներից, կենդրոնից շատ հեռու գտնուողները՝ ինչպէս Սատուրնը, Ուրանոսը, Նեպտունը և Իպիտերը՝ ահագին մեծութիւն ունենալով դեռ ևս բաւականին սառած մակերևոյթ չեն ստացել. լուսնակները և ուրիշ փոքրիկ աստղերը կամ մթնոլորդ չունին կամ արեգակի կենսատու ջերմութիւնից զուրկ հաստատութեան մի լաւ աղբիւրի արդիւնքը։

Վանքի մէջ գիտարան չը կայ և չէ լինում բացի առաջնորդից և մի քանի ծառաներից. ուրեմն, եթէ Եսայի եպիսկոպոսի 95 թուի հաշուի մէջ երևում է ուսելիքի ծախս 4430 դրան, այժմ, քանի որ Եսայի եպիսկոպոսը չկայ, այդ ծախսը 100 թուումանից աւելի չէ կարող լինել. բայց հաշուենք նոյն իսկ 450 թուման։ Կալուածների վրայ անշուշտ նորոգութեան, պարիսների խնդամելու համար և այլն 215 թուման. հարկատերութեան կալուածների համար—150 թուման. վանքի նորոգութեան, պարիսների, ծառաների վարձի և այլն մանր ծախսեր ընդամէնն 350 թուումանից աւելի չէ կարող անցնել։ Այսպիսով վանքը տարեկան ծախս է ունենում իր վրայ ոչ աւելի քան 1200 թուման. աւելացնելով դրա վրայ առաջնորդների ռոճիկը որ սահմանել է Եսայի եպիսկոպոսը մօտ 500 թուման տարեկան, լինելով քիչ էլ շռայլ—վանքը ունի տարեկան 2000 թուման ծախս։

Ո՞ւր մնացին ուրեմն Եսայի եպիս. հաշուով ցոյց տրուած 4500 թուումանի եկամուտից 2500 թուումանը և մեր հաշուով 3000 թուումանները։ Ո՞ւր են նրանք, թէ չգտնվեն կայ վում...

Պատասխանատուն այն չորս քահանաներն են այսօր, որոնք առաջնորդական

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մարսի, Վենուսի վերաբերմամբ որոնք հասարակաց պայմաններն ունին, ինչ որ մեր երկրագունտը, կարելի է ընդունել կենդանի օրգանիզմների գոյութիւնը։ Մաշկի վրայ ջրանցքներ են երևում, որ երկու բեռեռներում տարածուած ծովերը միմեանց հետ կապակցումեն։ Ջրանցքներն այնպէս կանոնաւոր և նպատակայարմար են շինուած, որ կասկածել նրանց գոյութիւնը մի ճարտարապետական ծրագրի և զարգացած ոգու պտուղ համարել քան թէ բնութեան կոյր գործողութեանը, որ սիրում է ուժեղ խոչնդոտներից խոյս տալ և շրջանաձև և յառաջ դիմելով աւելի հեշտ ճանապարհ որոնել։

Հաւանական է, որ միւս արեգակների մոլորակներից այնպիսիների վրայ, որոնք մօտաւորապէս նոյն հեռաւորութիւնն ունին իրանց ջերմութեան աղբիւրից--մայր արեգակից, նոյնպէս կենդանի արարածներ ապրելիս լինեն. և գուցէ այդ մոլորակների վրայի մարդիկ մեզանից աւելի զարգացած են և կուլտուրայի մի անհամեմատ աւելի բարձր աստիճանի վրայ են կանգնած քանթէ մենք...

Վ. Գ. Այզարէկեան

խորհուրդն են կազմում և հսկում վանքի ու վիճակի արդիւնքների վրայ։

Եթէ վանքը կողոպտվում է, եթէ նրա եկամուտները սակաւացել են կալւածների անխնամ պահելուց, եթէ նրանք մտնում են սրա—նրա կոկորդը պատասխանատուն այդ չորս քահանաներն են այժմ։

Հրաւիրում ենք հրապարակով խորհրդարան կազմող կրօնաւորներին բացատրութիւն տալ, պատասխանել մեր հարցերին. հրաւիրում ենք տեղեկութիւններ հաղորդել հասարակութեան այն հաստատութեան մասին, որ Դանայիտեան տակառի պէս ամբողջ պարսկահայերի ազգային հարստութիւնն է կլանում, առանց մի նշանախէց օգուտ տալու դպրոցների կամ ազգային այլ հիմնարկութիւնների. որ հրէշի պէս իր որկորն է լցնում հազարներ և մի կոպէկ իսկ օգուտ չէ տալիս և որ մի երկրորդ Էջմիածին է դարձել մեր գլխին ամբարելով ազգի հարստութիւնը, ուտեցնելով զանազան պարազիտների և ոչ մի հաշիւ չը տալով այն ժողովրդին, որից նա թէ ոյժով և թէ յանուն կրօնական զգացմունքների քամում է հիւթի մի ամենամեծ մասը, մնալով անտարբեր թէ աղէտների թէ սովերի և թէ աղքատութեան առաջ։

Հաշիւ տուէք, դարերից ի վեր ազգային հարստութիւնները անպատիժ կլանող կրօնաւոր պարազիտներ. հաշիւ տուէք թէ ինչ էք անում մեր դրամները, ինչ բանի էք գործածում մեր միլեոնները, մեր արիւն քրտինքով, հազար մի տանջանքներով ձեռք բերած և շնորհիւ մեր դիւրահաւանութեան՝ ձեր ձեռքը դրած հարստութիւնը...

Բացատրեցէք թէ ինչու էք լուռ, փակել ձեր գանձը այն ժողովրդի առաջ, որ այսօր սովից և ցրտից աղքատութեան մէջ հազարներով է մեռնում, հաւատափոխ է լինում և որը իր ժամանակին լցրել է այդ գանձերը...

Հաշիւ տուէք, դարերով մեր դիւրահաւանութեան յատկութիւնը հարստահարող անամօթներ...

Հ. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Զէյթունում 30000 ապստամբները ջարդեցին թուով 20000 զօրք և խլեցին թշնամու թնդանօթներն ու զէնքերը, գերի բռնելով բազմաթիւ զինուորներ։

Standard.

Սոֆիա են հասել հայկական կոմիտեի մի քանի անդամներ Լոնդոնից, այն նպատակով որ համաձայնութիւն կայացնեն Մակեդոնական յեղափոխական կոմիտեի հետ։ Բանակցութիւնները գաղտնի կերպով են կատարվում, բայց դժուար չէ գուշակել որ նպատակ ունին գարնան թէ Հայաստանում և թէ Մակեդոնիայում վերսկսել ապստամբութիւնը։

Народни Листи.

Այս օրերս Ձերբակալեցին հայեր և յոյներ, որոնք Կ. Պոլսի փողոցներն էին պտտում և նշան դնում քրիստոնեաների դռների վրայ։ Այս թերթն դէպքը սաստիկ շփոթ է առաջացրել։

Моск. Вѣд.

Daily Chronicle դիմել է Գլադստոնին հարցով, թէ նա կը մատակդէ արդեօք այն մարդկանց որոնք չը պնդտկանելով ոչ մի առանձին կուսակցութեան, փորձելու են Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու Հայաստանի դէպքերի վրայ։ Գլադստոնը պատասխանել է. «իմ մասնակցութիւնը քաղաքական շարժման մէջ՝ կարող է վնասել այդ շարժման. ուստի և ես պէտք է խուսափեմ դրանից»։

Րէյտէր.

Osservatore Romano թերթի խօսքերի համեմատ, պապը, լսելով հայերի կրած տառապանքները, ուղարկել է Սազարեան պատրիարքին 50000 լիր օգնելու համար զոհերի ընտանիքներին։

Հեռ. գործ. Ստեֆանի.

Տրապիզոնի դատարանը մահուան դատապարտեց 2 հայի և բանտարկութեան 6-ի նրանց՝ անկարգութեան մասնակցած լինելուն համար։ Վաշտերի շարժումը դէպի Տրապիզոն կատարվում է արագութեամբ։ Թիւրքերը հաստատում են որ զօրքերը ուղարկվում են հայերի դէմ, բայց յայտնում են որ քիւրդերն էլ թշնամական դիրք են բռնել և շատ զինուած անձեր են ժողովել։ Հայերի գաղթելը դէպի Ռուսաստան՝ շարունակվում է։

Köln. Zeit.

Ամէն օր և ամէն միջոցներով Ռուսիան արտայայտում է իր չկամութիւնը հետևելու անգլիական պոլիտիկային որը աշխատում է իր ետևից քաշել միւս պետութիւններին և անհանգիստ անել սուլթանին։ Ռուսաստանը մի պոլիտիկայի է հետևում, որի նպատակն է ամէն միջոցներ ի գործ դնել, չը թողնելու համար որ Թիւրքիան վնասուի։

New york Herald.

Հայկական կոմիտեները որ այժմ անուանվում է Անգլո-Հայկական ընկերութիւն և որ ունի իր անդամների մէջ այնպիսի մարդիկ, որպիսիք են Արգայլի և Ուեստմինստրի հերցոգները (դուքսերը), այս օրերս բաց է թողել մի շրջաբերական որի մէջ ասված է որ եւրոպական համերաշխութիւնը մի անամօթ դաշնակցութիւն է, որի նպատակն է զոհ բերել թշուառ հայերին յամաքային զանազան բիրժանների ախեղիստ դրամատէրներին... Այդ շրջաբերականը հրաւիրում է խիստ միջոցների դիմել....

Այս ագիտացիան (շարժումը) կարող է շատ հեռու գնալ. նրան սաստիկ օգնում են Մեծն Բրիտանիայի բոլոր եկեղեցիները։

Այդ եկեղեցիների պոլիտիկական գործողները պատրաստ են մինչև իսկ կռիւ յայտարարել Թէ դա պէտք համարի Հայաստանի դրութիւնը բարելաւելու համար։ Նրանք մտադիր են դիմել Լորդ Ռոզբէրիին, ինչպէս աւելի կամքի տէր մարդու, քան Սալսբիւրին. վճռել են հրաւէր ուղարկել Ռոզբերիին որ այժմ Սպանիա է և խնդրել որ նա անցնի շարժման գլուխը։ Եւ որովհետև այդ շարժման գլուխն են անցել Արգայլի և Ուեստմինստրի դուքսերը, այդ պատճառով Ռոզբ՝րին չէ կարող մերժել ընդունելու իրեն առաջարկուած դերը։

Տորիները (պահպանողականները) առ այժմ դիտում են այդ բոլոր շարժումը. նրանք վախենում են որ արմատականները և ազատամիտները թուով կը յաղթեն իրենց։

Моск. Вѣд.

(Ռուս. պաշտօն. թերթ)

Ա.հա Ա՝ գլո-հայկական ընկերութեան, որոնց գլուխ են անցել Արգայլի և Ուեստմինստրեան դուքսերը—շրջաբերակա՝ի բովանդակութիւնը։

«Այժմ արդէն ամբողջ աշխարհին յայտնի եղաւ «Եւրոպական համերաշխութեան» ինչ լինելը։ Ինչ վերաբերում է Գերմանիոյ և Աւստրիոյ մասնակցութեան, դա յայտնվում է որպէս մի անպատիւ դաշնակցութիւն, որ անունով է միայն ցոյց տալիս ոչ քրիստոնէութեան խաղաղութիւն է ուզում պահպանել, բայց իրականապէս ներկայանում է մի յանցաւոր դաւադրութիւն որով կամենում են թիւրքահայերի արիւնով պահպանել Բերլինեան Վէննայի և Կ. Պոլսի մի քանի ինքնասէր դրամատէրների շահերը։

Այժմ գլխաւոր վտանգը կայանում է նրա՝ում որ գերմանական դրամատէրերի անպատկառ ներկայացուցիչները տիրել են Սալսբիւրիին և անգլիական ազդեցութիւնը ուղղելու են կրօնի և քաղաքական իրաւունքների դէմ։ Բռնաբարութիւն, տանջանք, անմեղ արեան հոսումը, երևում է որ ոչ մի դեր չէ խաղում այդ լիրբ արարածների աչքում։»

Daily Chronicle

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԻՑ

—

3 դեկ. 95

Զաւդի 42 համարում մի նամակ երևաց, որով մի անսորագիր ջուղայեցի պատող մտնում է ազգային հաստատութիւնների մէջ։ Նամակագրի զեկուցումները մենք համարում ենք կրքից բղխած և ոչ արդարացի. նա երևի հաճոյանալու համար՝ խունկ է ծխում իր պատրօնների քթին, կամ օտարամոլութիւնից դրդուած՝ ոչ թէ իր դաւանած սկզբունքին է ծառայում, այլ հանգամանքներին։ Պարոնը կամենում է հաւատացնել որ մեր Կեդրոնական և ս. Կատարինեան երկսեռ դպրոցների ուսումն բողոքականներինի հետ համեմատ՝ ստոր աստիճանի վրայ է կանգնած, և թէ այդ կրթարաններն արժանի չեն Պարսկաստանի մէջ առաջինը կոչելու *) Նա ծիծաղ է յայտնում աւագ ուսուցչի վրայ, որ իր պարտականութիւնը կատարելով՝ համեստ խօսքերով հաղորդում է ժողովված հասարակութեանը դպրոցների դրութեան մասին իր կարծիքը, և աւելացնում է թէ այդ ուսուցիչը՝ իբրև թէ իր գոված դպրոցները թողած՝ քանի օրից յետոյ խոյս է տալիս ասպարիզից և գնում է ծառայել մի ինչ որ եւրոպացու մօտ։ Ուսուցչի հեռանալովը երբէք դպրոցների ուղղութիւնը չը փոխուեց. նա գնաց՝ մի ուրիշ արժանաւորը անցաւ նրա տեղ. ոչ ոք իրաւունք ունի պահանջել մէկից որ նա անպատճառ մնայ մի հիմնարկութեան մէջ, երբ անհրաժեշտ հանգամանքները ստիպում են նրան այնտեղից հեռանալ։ Մենք հաւասարապէս և անկեղծարար յարգում ենք թէ հայ-բողոքականաց և թէ հայ-լուսաւորչականաց կրթական հիմնարկութիւնները, որովհետև երկուքն էլ ծառայում են սուրբ նպատակների համար—բայց առանց հաստատուն փաստերի ելնել մէկին պարսաւել և միւսին բարձրացնել, այդ չէ համարվում ազնուութիւն։ Կեդրոնական և ս. Կատարինեան օրիորդաց դպրոցները իրանց արդի կացութեամբ՝ պերճախօս վկաներ են հանդիսանում։ Նրանց այժմեան մխիթարական դրութեան մասին կարող է ապացոյց լինել այն հանգամանքը, որ ժողովուրդը բաւական համակրութեամբ է վերաբերվում դէպի նրանց, շարունակ ուղարկելով այնտեղ 400-ից աւելի երկսեռ ուսանողներ։ Գիտէք որ հայ ժողովուրդը հաշուող է, գործնական է, նա չի անիլ մի այնպիսի քայլ, որից օգուտ չէ կարող տեսնել, նա չօշափելի կերպով ճանաչում է դպրոցների վիճակը, լաւ հասկանում է որ նրանց մէջ գործ կայ, *) և աշխատում է դէթ բարոյապէս քաջալերել գործողներին. բայց թէ ինչու դրամական նպաստներով չէ ապահովում նրանց, դրա մասին առայժմ այնքանս միայն կասենք. որ ազգի ցեցերը ամեն տեսակ հնարքներով ջանացել են մինչև օրս և շարունակ ջանանում են խափանել նրանց յաջողութիւնը և սառեցնել մարդկանց սրտերը դէպի բարի ձգտումը։ Ցիշեալ թղթակիցը աշխատելով ստուեր ձգել մեր ազգային հաստատութեանց վրայ, գրում է թէ բողոքականները այնքան և այնքան գործունեայ մարդիկ են ընծայել ազգին։ Սրան անաչառ կերպով կը պատասխանենք, թէ այն մի քանի անձինք որ իրանց դպրոցներից դուրս են եկել և գործ գտել, նրանք գոկսոր հէնելու շնորհն էր. նրանից յետոյ քանին մրատան գործի մէջ։ Եթէ մատ էլ են, պատճառն այն է, որ նրանց պաշտպանները բողոքական լինելով, և զանազան վաճառականները ու անգլիական բանկի կառավարիչները նոյնպէս բողոքական լինելով, առաջինները ներկայացնումն վերջիններին—իրանց դպրոցից դուրս եկածներին և խնդրում մի որ և իցէ գործ տալ, սրանք ևս ընդունում են ոչ այնքան արժանաւորութեանց, քրքան խնդրարկուների խնդիրքը յարգելու համար։ Իսկ մեր խեղճ լուսաւորչականների պաշտպանն ով է։ Բայց չը նայած այդ հանգամանքին՝ թէ բանկում և թէ եւրոպացի վաճառականների մօտ՝ գտնվում են մեր դպրոցից դուրս եկած աշակերտներ ևս, որոնց լրատուն չէ կարողացել տեսնել։

Այցելուն մտնում է Կեդրոնական դպրոցին կից գրադարանը և այնտեղ նկատում է Ազգասէր անուն լրագրի, Ջուղայու պատմութեան և Աւագ շաբաթ կոչած գրքի օրինակները միայն. չէ տեսնում այնտեղ առաջին և երկրորդ տարի Ջուղա տպած Մայրենի լեզուի

*) Գարդ է որ արժանի չեն«

Ծ. Խ.

*) Աւելացրէք որ «... և կամ գիտէ որ այնտեղ կարելի է ուղարկել իրենց մանուկներին նրանց ցերեկով գլխից ոռդ անելու համար։

Ծ. Խ.

հողարաւոր օրինակները, որոնցից բաւական մեծ թիւով իսկ վաճառուեցան բողոքականաց դպրոցներին. չէ տեսնում Հայոց պատմութիւնները, Տարերք քերականութիւնները, առաջին տարի Անգլերէն ընթերցանութեան նոր դասագրքերից մինչև եօթներորդ տարւայ բազմաթիւ օրինակները, Անգլիոյ և Հնդկաստանայ պատմութիւնների դասագրեանքը, ևս և բազմաթիւ պարսկերէն ընտիր դասագրեանքը՝ բերել տուած Բոմբայուց և յարմարացրած մեր դպրոցների բոլոր դասարանների համար և այլն և այլն, որոնց մի առ մի թուելն աւելորդ կը լինէր այստեղ։

Հայոց երկսեռ դպրոց

ՆԱՄԱԿ ՋՈՒՂԱՅԻՑ

7 դեկտ. 95,

Յանուն ճշմարտութեան հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ուղղել պ. Բրիչին, որ Զաւիղի 42 համարում Դրախօսութիւն վերնագրով մի քննադատական յօդուածով ի միջի այլոց արատաւորում է Ջուղայեցի մի հանգուցեալ հայ քահանայի անուն յիշատակը։

Արդարև կարմրելու էին յօդուածի մէջ յիշուած քահանայն և նրա ժառանգները եթէ ճիշտ լինէր այն որ 1872-ին փոխ առնելով աղքատաց արկղէն, մինչև 1895 թուականն անվճար թողած լինէին. բայց հիմայ ընթերցողն կտեսնէ որ խնդիրն բոլորովին տարբեր կերպարանք ունի և քահանայն բնաւ փող չէ ստացած եղել աղքատաց արկղէն. ահա թէ ինչ է եղելութիւնը։ 1892-ին Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննէսեանը տիրող սովը եկամուտի մի նոր աղբիւր համարելով, իրեն համար խոշոր դումարներ կաշառք էր ստանում ագահ և ազգի փողերովը հարստացած քահանաներէն և աջ ու ձախ օրհնութեան կոնդակ շնորհում նրանց, պատմական Հնդկաստանի հարուստ և բազմարդիւն վիճակներին մէջ հովուական պաշտօն վարելու համար։ Հերթը հասաւ պ. Բրիչի դատապարտած աղքատ Տէր Կարապետ Յորդանանեանցին որ դժբաղդաբար չունէր մի քանի տասնեակ փայլուն ոսկիներ՝ սրբազանի խալիչայի տակը դնելու և արդիւնաշատ վիճակների մէկը ձեռք բերելու (Գրիգորիս եպիսկոպոս շատ սիրահար էր դեղին ու փայլուն ոսկու։ ականատեսք ոմանք պատմում են որ մի ոսկու արժողութեամբ դրան (արծաթի) ձեռքումն ունենալուն պէս՝ կը փոխանցէր ոսկու և խնամքով կը պահէր երկաթեայ ամուր սնդուկին մէջ) եպիսկոպոսն, չնայելով որ քաջ տեղեակ էր քահանայի նիւթական խիստ նեղ վիճակին, հրամայեց նրան երեսուն թուման «աջահամբոյր» տալ և Պասրայի պէս մի ամենանմխիթար և ապարդիւն թեմի կոնդակն ստանալ. խեղճ քահանայն ի զուր աշխատեց շարժել քարասիրտ ու անխիղճ մարդու կարեկցութիւնը զէպի իրեն և իւր սովատանջ ընտանիքը, յայտնելով որ նախ և յառաջ բոլորովին անկարելի էր իւր համար երեսուն թուման մի փոխառութիւն անել նրա անիրաւ պահանջն լցուցանելու և երկրորդն իւր կենաց մէջ մի ոսկէ արդիւնաւոր վիճակ զտած չլինելով այս անգամ ևս Պասրայի պէս մի թեմ իրեն յանձնելն կնշանակէր մի ամբողջ ընտանիք մահուան դատապարտել։ Եպիսկոպոսն զայրացած քահանայի ընդդէմ որ քաջութիւն ունեցաւ զգացնել տալ իրեն յայտնի մի անիրաւութեան համար, ապառնացաւ անմիջապէս կարգալոյծ անել, եթէ չենթարկուէր բարձր հրամանին. քահանայն պարտաւորուեցաւ տեղի տալ բռնաւորի կամակորութեանը բայց աջահամբոյր տալու անկարող լինելով՝ մի մուրհակ է տալիս եպիսկոպոսին 150 ղուռանու, մի որոշ ժամանակից յետ գումարն վճարելուպայմանաւ ի այսպէս դժբաղդ քահանայն ծանրաբեռնեալ հոգսերով թողեց իւր թըշուառ ընտանիքը յուսահատ, անօգնական վիճակի մէջ ու հեռացաւ ամենայն ինչ թողնելով ճակատագրին։ Դեռ չհասած Զիրազ, ճանապարհին կողոպտուեց աւազակներից և մերկ ժամանեց Պասրա, ուր երկու տարիի չափ առաւելեց թոքախտի մաշողական հիւանդութեամբ, և երբ բժիշկների խորհրդով ուզեց վերադառնալ իւր ծննդավայրն, անբուժելի ախտէն փրկուելու յուսով, Բուշիր հասնելուն պէս կնքեց իւր մահկանացուն, թողնելով իւր անբաղդ այրիի և տառապեալ որբոց համար ծանր վաշխակիր պարտքեր և ուրիշ ոչինչ...

Ահա այդպիսով բաղդահալած քահանայն զոհ գնաց սիմոնականութեան և իւր պաշտօնակիցների զուր նախանձին։

Ցայս վայր ընթերցողն հետաքրքիր է իմանալ թէ ինչպէս ուրեմն այդ 150 ղուռանի մուրհակն մտած էր աղքատաց սնդուկի մուրհակների ցանկին մէջ. կխնդրուի ուշադրութեամբ կարդալ եղելութիւն և սոսկալ մեր սեագլուխ ու սեասիրտ հոգևորականների խարդախութիւնների և տմարդի գործողութեանց վրայ։ Անխիղճ եպիսկոպոսն մտածելով թէ գուցէ քահանայն երբէք չկարողանայ վճարել խոստացած գումարը, իսկոյն մուրհակը յանձնում է աղքատաց սնդուկի հոգաբարձութեան և գումարը ստանում։ Երբ Եսայի եպիսկոպոսն իւր 1893-ի հաշուեցուցակի մէջ մտցրած էր այդ մուրհակն, Տէր Կարապետ Յորդանանեանցի ժառանգները կարդալով՝ զարմանօք հետաքրքիր եղան տեսնել այդ մուրհակը երբ կարդացին՝ զայրացան և կամեցան ճշմարտութիւն երևան հանել և ի լուր աշխարհի հռչակել հայ եպիսկոպոսի խարդախութիւնը. բայց նկատելով թէ այդ անելով արատ բերած կլինէին հայ հոգևորականութեան, լռութեան տուին և իրենց անիրաւեալ հօր յիշատակը յարգելու և ազգի առջև պատասխանատու չմնալու համար դեռ 1894 թուականի մէջ վճարեցին այդ անարժէք մուրհակի գումարը անթերի։

Մենք սխուր պարտաւորութիւն զգացինք ճշմարտութիւնը յայտնել և հարկաւոր դէպքում պատրաստ ենք մուրհակի օրինակն հրատարակել, որպէսզի Զաւիղի ընթերցողները չը կարծեն թէ Տէր Կարապետ Յորդանանեանը շատերի նման ազգի փողերը կլանող ու Հնդկաստանի հարուստ թեմերի շնորհիւ հարստացած հոգևորականներից մէկն է եղել։

Արդեօք այսչափ բաւական է պ. Բրիչի համար համոզելու որ 1872 թուականի Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Գրիգորիս Արք եպիսկոպոսն է որ պիտի կարմրէ և ոչ թէ Տէր Կարապետը որի ազգանունի դէմ կերևի թէ պ. Բրիչը մի տեսակ նախապաշարումն, կամ ատելութիւն ունի։ *)

***

*) Յօդուածագիրը սխալվում է. Բրիչը ոչէր Կարապետին կամ նրա ժառանգներին չէ ճանաչում և նրանց գոյութիւնը իսկ չը գիտէ. նա իր քննադատութիւնը արել է, աչքի առաջ ունենալով միմիայն Եսայի եպ. տուած հաշիւը։

Ծ. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս ընթերցողը կը տեսնէ, Շաւիղի № 46-ը իր ժամանակից շատ ուշ է դուրս գալիս։ Դրա պատճառը ահա թէ ինչ էր։ Քիչ մնաց որ Շաւիղը դադարեցնէին հրատարակելուց, որովհետև մի քանի հայ մատնիչներ (որոնց անունը յոյս ունինք տալուց մի ուրիշ անգամ) դիմել էին կառավարութեան, ամբաստանելով Շաւիղին որպէս դէմ ըղ թիւրքական պետութեան։ Դրա համար այդ զզուելի մատնիչները մատնանիշ էին ա-ռել թերթի № 40-ի առաջնորդողը։ Կառավարութիւնից հրաման ստացանք իբր պատիժ այդ «զեղծման» դադարեցնել թերթը երեք ամսով. սակայն խմբագրութիւնս դիմումներ արեց և շնորհիւ Ն. Վ. Տպագրութեան նախարարի անաչառութեան և լուսամտութեան ազատում ենք թերթի կանոնաւոր հրատարակութիւնը։ Սա քանի անգամ է որ թերթը մատնութիւնների զոհ է դառնում. այդ նրանից է որ չը կայ մեր մէջ հայրենական ձայն բարձրացնել ազգ համար այն մատնիչներին որոնք իրենց կէտ նպատակի եկ դրել հայի համար ոտնատակ տալ ամէն ազնուութիւն։ Կրկնում ենք, շուտով կը տանք մենք այդ մատնիչի կամ մատնիչների անունը և թող հասարակութիւնը վարի նրանց հետ ինչպէս կը կամենայ։

—

Կիրակէ, Դեկտ. 10-ին տեղի ունեցաւ յօգուտ Ազգ. գրադարանի տրուող երեկոյթը։ Ընդհանուր առմամբ երեկոյթը լաւ տպաւորութիւն թողեց. անախորժ էր լսվում միայն երկրորդ խմբական երգը և այն էլ ձայների բացակայութեան պատճառով։ Նւագածութիւնները, Ռշտունեաց երկրի օրորը, մոգական լապտերը և մանաւանդ կենդանի պատկերները՝ շատ լաւ անցան։ Սրահը այնքան լիքն էր որ ասեղ ձգելու տեղ չէր մնացել. տոմսակները բոլորը ծախուել էին և հանդիսականները գոհ մեկնեցին։ Լսում ենք որ 130 թուման եկամուտ է եղել։ Երեկոյթի խումբը պատրաստութիւնը է տեսնում մի նւագահանդէս տալու նախկինից աւելի ճոխ և շքեղ ծրագրով, յօգուտ կահաւորման թատրոնի և գրադարանայ սենեակների։

—

Երեկոյթներ միմիանց են յաջորդում դրանում աւելի աշխոյժ են շարժվում բողոքականները, որոնք օր բաց թողնելու մտադիր չեն. դեռ նոր էր որ մի երեկոյթ տուին Դարվազա Ղազվինում որ մէկն էլ ուրբաթ ամսոյս 15-ին տուին։ Այս երեկոյթը նոյն տեսակ ծրագիր ունէր ինչպէս իրենց առաջին երեկոյթը, զանազանութեամբ նրա, որ մասնակցում էին երաժշտութեամբ պ. Վ. Փափազեանը և Տ. Զանկլէրը։ Խմբական երգերը շատ վատ անցան. ուղղակի խայտառակութիւն էր։ Աւելորդ էին բոլորովին և ձանձրացուցիչ՝ բուսաբանութեան և աստեղագիտութեան մասին խօսածները. տարբերական և անհամ կրկնութիւններ էին առողջաբանական խրատները, որի մէջ պ. դասախօսը յայտնեց մի այնպիսի հիմնովին սխալ միտք որպիսին է վարակիչ հիւանդութիւնների, դիֆտերիտի, խոլերայի և այլն բացիլների օդի միջոցաւ փոխանցելը. մեկրոպները չեն փոխանցվում օդի միջոցաւ այլ միմիայն հպումներով։ Հետաքրքիր դասախօսութիւնն էր պ. Յ. Միրզայեանցի «Արաբները և նրանց երկիրը», որը սակայն շատ երկար լինելով՝ ձանձրացնում էր և. որը յարմար ժողովրդական ընթերցանութեան, անյարմար էր ժողովրդական դասախօսութեան համար իր շատ մանրամասնութեամբ։ Երկրորդ մասը շատ աւելի յարմար էր դասախօսութեան։ Տիկին Քէյնի ձայնը խորժելի էր թէև ոչ ճկուն։ Տաբօրինակը և մինչև իսկ կարելի է ասել այլանդակը այն էր որ թէ Տ. Զանգլէրը և թէ Տիկին Քէյնը ամբիոն բարձրացան և կատարեցին իրենց բաժինը գլխարկները՝ գլխին և մուշտակէ վերարկուով։ Գոնէ եւրոպացի տիկինները պարտաւոր էին գործադրել տարբերական քաղաքավարութիւնները։ Երեկոյթին շատ քիչ հանդիսականներ կային։ Սրահը լիքն էր երևում որովհետև նստարանների մեծ մասը բռնուած էին դրպրոցի բազմաթիւ աշակերտներով։ Նորից խորհուրդ ենք տալիս թողնել ճառախօսութիւններ մտցնելը երեկոյթների ժամանակ և օրինակ առնել Դեկտ. 10-ի Դարվազա-Ղազվինում տրուած երկոյթից։ Կարծում ենք որ երեկոյթից հազիւ 25—30 թ. գոյացած լինի։ Սպասում ենք որ այդ և անցեալ երեկոյթի հաշիւները հասարակութեան ներկայացնեն։

—

Տիտղոսի հարց...ահա օրական խնդիրը թէ հրանում։ Սաղերը գրգռուել են և կռկռում են սրբապղծութիւն համարելով այն, որ մի ազգային մարմին մի խնդրի առթով գրած լինելով մի անձի, փոխանակ «վսեմափայլ կամ գերազնիւ կամ ճաճանչափայլ և այլն գրելու, պարզութեամբ գրել է «պարոն»... Տիտղոսամոլութեան այդ ազմուկը եթէ տիտղոսի տիրոջից է դուրս եկել (որ չենք ուզում հաւատալ), դա անմտութեան ապացոյց է միայն. իսկ եթէ կողմնակի անձերից—այն ժամանակ խորհուրդ կը տայինք կարդալ Մշակ № 135 «Ազգականութեան դէմ» ռուսաց արդարադատութեան մինիստրի տուած զեկուցումը։ Տիտղոսներ ունեցողները թող աւելի քիչ ձևապաշտ լինեն, աւելի քիչ ծիծաղելի դառնալու համար։

—

Սրանից ամիսներ առաջ Թէհրան եկաւ Howard անունով մի անգլիացի, որը թղթակից էր մի ամերիկական թերթի և իր Հայաստան մտնելու միջոցն էր մտածել ֆոնոգրաֆ ցոյց տալը։ Ինչպէս երևում է, այդ անգլիացուն յաջողել է Հայաստան մտնել և այնտեղի սարսափներին ականատես լինել, որովհետև իր սոսկալի ուղաւորութիւնները մանրամասնօրէն և պատկերաղարդ տպագրուած են ամերիկական The Worlds թերթում և երկու ահագին երեսներ են բռնում։

Անգլիական Century ամսագրի մէջ գտնում ենք Զէյմս Բրայսի «Հայկական հարցը» վերնագրով մի յօդուած, որով յօդուածագիրը լիայոյս է որ շուտով խաղաղութիւն կը տիրի Հայաստանում և թոյլ կը տայ վերջապէս հայերին կեանք վարել հանգստութեամբ. հայերին որ այնքան անգութ կերպով տանջուեցին և որ մի համբերող (ափսոս որ ճիշտ է) և քաջ ժողովուրդ են կազմում։

—

Կանոնիկոս Մակ—Քոլլը նորից մի վրդովուած և պերճախօս յօդուած է հրատարակել Contemporary Review ի նոյեմբերի համարի մէջ Կ. Պոլսի կոտորածի մասին։

—

Տպում ենք Սպահանից մի նամակ որը վերաբերում է Տ. Կ. Յորդանանեանցի Սպահանի Աղքատախնամ արկղին եղած պարտքին։ Թիւրիմացութիւն է եղել։ Պ. Բրեչը կամեցել է ասել որ այդ պարտքը չէ վճարուած եղել 72-ից մինչև 95 թիւը և ոչ թէ նա յետ վերջին թուին անգամ դեռ չէ վճարել։ Եսայի եպիսկոպոսի 95 թուի հաշիւը ցոյց է տալիս որ 95 թուին այդ պարտքը վճարուած է, ուրեմն Սպահանի թղթակցի նախատինքը աւելորդ է, իսկ նրա պատմութիւնը այդ պարտքի գոյանալու վերաբերութեամբ տալիս ենք հաւատալով միանգամայն որ Գրիգորիս եպիսկոպոսը մի այդպիսի կեղտոտ բան արած լիներ։ Եսայի եպ. մեղք չ'ունի բոլորովին դրա մէջ, մուրհակ է տեսել և վճարել է տուել։ Եւ որովհետև վճարուած վերջացած է, հարկաւոր է փակել այդ խնդիրն ևս։

—

Մէշէդիսարից պ. Ներսէս Տէր Յովհաննէսեանը մեզ յայտնում է որ սուտ է Շաւիղի № 41-ում երևան եկող բողոքական գրավաճառ Կաշա Իբրահիմովի արդարացումը և որ ինքը ներկայ էր նրա՝ Աբրահամ Սարումեանցի իրեղէնները գողանալուն։ Խմբագրութիւնս յայտնում է որ այլևս չէ զբաղուելու այդ գործով որ մասնաւոր կերպարանք է ստացել այժմ։ Կաշան գող է կամ ոչ այդ մեր գործը չէ և ոչ ոքի չէ հետաքրքրում։

—

Դավրէժից մեզ գրում են որ տեղապահ վարդապետը քանդել է հոգաբարձութիւնը և իր ուզած մարդկանց հաւաքել գլխին, ժողովրդական ընտրութեան սկզբունքը ոտնատակ է տրուած և դպրոցը խաղալիք է դարձել Զիլինկերեանի ու Սառաֆեանի ձեռքին։»

—

Սպահանից ստացել ենք Պ. Հ. Շահին ուղղուած մի շնորհակալութեան ուղերձ, որի մէջ թուած են այն բոլոր բարիքները, որոնք արել է Ն. Կ. Վեհափառութիւնը պարսկահայերին։ Նոյնտեսակ շնորհակալութիւններ գալիս են և ուրիշ քաղաքներից։ Ցաւում ենք որ տրպել չենք կարող նրանցից ոչ մէկը։ Ն. Կ. Վեհափառութիւնը այսօրերս արդէն հեռաձիր է խփել ամէն կողմ պատուիրելով որ առանձին խնամք և հոգ տանեն իր սիրելի հայ հպատակներին։ Կը կի՛ն ա՛զգամ պարսկահայերի կողմից մատուցանում ենք մեր երախտագիտական շնորհակալութիւնները։

—

Նոր-Դարի թղթակիցը Դավրէժից լսել է տալիս որ Ն. Կ. Վեհափառութիւնը նոր Շահը բարեհաճել է յատուկ հրամաններ ուղղարկել բոլոր նահանգապետներին որ լաւ վարուեն և հոգ տանեն հայերին։

—

Արտաբիլից մեզ գրում են որ նոյ. 11-ին այնտեղ ևս եղել է հոգեհանգիստ Կ. Պոլիս և այլ քաղաքներում զոհուած հայերի համար, ապա ձեռնարկուել է հանգանակութեան յօգուտ Հայաստանի սովեալների և գումարը հասցրած է է մինչև 180 թումանի։ Գովելի է արդնբիլցիների այդ ընթացքը։

—

Նոյն տեղից հաղորդում են որ ուսուցիչը շուտով մտադիր է թողնել դպրոցը որովհետև ոչ ոսկի են վճարում և ոչ էլ ապահովացնում։ Ամօթ չէ արդնբիլցիների համար որ ոգուն մանկան տարուայ կէսին ստիպում են իրենց ուսուցչին հեռանալու։ Միթէ այնքան ոյժ չունին որ մի դպրոց ա՛զգամ պահեն։ Սպասում ենք որ երիտասարդութիւնը ոյդպիսի անախորժութիւնները վերացնի շուտով։

—

Բիթլիսի երեսուն և եօթ հայ «երևելիներ»—ինչպէս ասում է թիւրքաց պաշտօնական զեկուցումը—Նոյեմբեր 4-ին մի սուզերձ են ուղարկել Կ. Պոլիս մեծ եպարքոսին որի մէջ յայտնում են որ «չարամիտներ ոմանք խաբեցին ու գրգռեցին մեր ազգը. զմեզ ամօթապարտ ընելու ընթացքներու մէջ գլտնուեցան... կալգ մը խռովարարներու կողմէ մեր ազգին անունով լրբութիւններ եղան... ինքզինքնիս պաշտպանելու բնաւ իրաւունք չունենք... ներում և գթութիւն կը հայցենք։»

—

Արտատպում ենք Կ. Պոլսի թերթերից, թիւրքաց պաշտօնական զեկուցմամբ ուած մի հեռագիր։ «Պիթլիսի հայ-հոմէկականներու երևելիներէն տասներեքին ստորագրութեամբ և նոյեմբեր 14 թուականով հետևեալ հեռագիրը ուղղուած է անուաստներս հայ-հոմէական ենք։ Շնորհիւ օսմանեան կառավարութեան մինչև հիմա հաւատարմութեամբ ապրած ենք։ Մէկ քանի չարամիտներու թելադրութեամբ անցեալները թէ Պիթլիսի հայերը և թէ անոնց գրած անձնուէրները խառնակութիւններ հանեցին, ինչ որ մեծ յանդգնութիւն մը, անկարգութիւն մը և աւազակութիւն մըն է։ Բոլոր ազգը նոյնպէս տեսաւ հայոց այդ ընթացքն ու աւազակութիւնը։ Մեր ազգը հաւատարմութենէ բնաւ շեղած չէ. բնաւ խառնուած չէ վնասակար գաղափարներու ու ընթացքներու և այդ կարգի վայրագ անկարգութեանց։ Մեր ազգը զերծ է խռովութենէ, անկարգութիւններէ և մեքենայութիւններէ։ Մեր ազգը օսմանեան կառավարութեան արդարութեանը տակ անդորրութեամբ, ապահովութեամբ ու իր գործերով կը զբաղի և բարեմաղթութիւններ կընէ վ. ոուլթանին համար»։ Որպէսի նոզկանք է ազդում հայ-կաթոլիկների այդ եղբայրասպան զեկուցումը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Կ. Պոլիս. դեկտ. 14 (Ն.ա.) Այսօր սուլթանը մի նոր իրադէ է հրատարակել որով հրամայում է խիստ պատժի ենթարկել բոլոր մարդասպաններին և կողոպտիչներին, և զինուորական ոյժով զսպել անկարգութիւնները։

Կ. Պոլիս. 15 դեկտ. 1000 հայեր ապաստանել են Սև ծովի ափերում գրաւած քաղաքներում.—Քիր ըդերն առանց ո և է դիմադրութեան կոլոպտում և աւերում են գիւղերն. վերջի 3 շաբթուայ ընթացքում 160 գիւղեր թալանել և աւերել են։

Կ. Պոլիս. դեկտ. 16 Իրերիվիճակն Հայաստանում անտանելի են, հազարաւոր հայեր մահից ազատուելու համար դիմում են կրօնափոխութեան։—Դուդիակն և աւստրիական արտակարգ պահականաւերն հասան Բոսֆոր։ Այսօր տաճիկ զօրքերն յարձակեցին Կրէտէի ըէֆօրմիստների վրայ, բայց յետ մղելով թողեցին 36 վիրաւորուած և 24 մեռած, նոր զօրքեր ուղարկում են օգնութեան։—Ռուսաց արտակարգ պահականաւն այսօր հասաւ Բոսֆոր։

Կ. Պոլիս. 17 դեկտ. Ընդհանուր դրութիւնը խաղաղ է երևում թէպէտ զաւառներից եկած տեղեկութիւններն անբաւարար են։

Կ. Պոլիս. 19 դեկտ. Տաճկական զանձարանն դատարկ է և օսմանեան բանկն մերժում է նոր փոխառութիւն անել։

Լոնդոն. 25 դեկտ. «Թայմզ» խօսելով այն ոգևորութեան մասին որ այժմս տիրում է Անգլիայում, միջամտելու Հայոց հարցին, պնդում է որ անգլիան անկարող է առանձին գործել այդ խնդրում։

Լոնդոն. 26 դեկտ. Անգլիայում շարժում է նկատւում ի նպաստ Ալգալի դուքսի այն առաջարկութեան որով նա հաւիրում է Ռուսիային խաղաղութիւն ներմուծելու Հայաստանում։—Լորդ Սալզբրի հեռագրել է Նուպար փաշային, որ թագուհին նրան շնորհել է K. C. S. I. տիտղոսն, ի վարձատրութիւն այն ծառայութեան որ պաշտպանել է Անգլիայի և Եգիպտոսի ջերմ բարեկամական յարաբերութիւնները.—«Թայմզի» Գահիրէի թղթակիցը գրում է որ Անգլիայի և տեղացի պաշտօնեաների համերաշխութիւնները Եգիպտոսում երբէք այնքան կատարեալ չեն եղել ինչպէս այժմս, Մուստաֆա Ֆէյմի փաշան հետևում է Նուպար փաշայի քաղաքականութեան։—Տաճկաց զօրքը գրաւել է Զէյթուն. մանրամասնութիւնները յայտնի չեն։

Կ. Պոլիս. 27 դեկտ. Զէյթունից ստացած մանրամասնութիւնները ապացուցանում են տաճկաց յաղթութիւնը։—Հայերի յամառ կռիւից յետ տաճիկ զօրքը գրաւել են քաղաքը. սպանել են հայերից 2500, իսկ թուրքերից 250։

Կ. Պոլիս. 24 դեկտ. Թրքաստան գաղթականներին դուզներին, ամսոյս 19-ին։—Քրիստոնեայ օգնական կուսակալներ են նշանակուած, Սիվազ, Բիթլիս և Էրզրում։

Կ. Պոլիս. 28 դեկտ. Բ. Դուռը հրահանգներ է ուղարկել Զէյթունի կառավարչին հրամայելով որ նա խստութեամբ չը վերաբերուի դէպի Զէյթունի այն բնակիչները, որոնք չեն մասնակցել ապստամբութեանը։ Բոլոր սլեռութիւնները պնդում են որ Բ. Դուռը մեղմութեամբ վարուի այն ապստամբների հետ որոնք ապաստանել են լեռների վրայ։

ՇԱՒԻՂԻ ՊԱՏՍԽԱՆՆԵՐ

—

Թիֆլիս, Մշակի խմբագրութեան։ Մեզ տեղեկութիւն է տալիս որ ուրիշները ստացել են, թ՞չպէս է որ ձեզ չէ հասել։ Տեղեկանալու նեղութիւն կրէք կամ փոստից և կամ զբաքննական ատեանից։ Մեզ էլ յաճախ պատահում է որ շաբաթներով Մշակ չենք ստանում։

Մարաղայ. Մ. Սէյդեան. Հոկտ. 27 թուականաւ նամակ չենք ստացել. կուզարկենք. ուղարկեցէք նամակադրոշմով։

Էնզէլի. Ա. Մ. Ալտիվերդեան. դժուարի է ձեր եռանդը. շարունակեցէք։ Ձեզ համար գրել է բաժանորդ մեր գործակալը. նոյնը և տիկին Հայկանոյշի համար։ Ձեզ կը գրենք քիչ յետոյ։

Ռուշչուք. Ֆ. Հազլեան. Ձեր խոստումը մոռացել էք երևի, ոչինչ չը ստացանք ձեզնից։

Թիֆլիս. Յ. Սպենդիարեան. Սպասում ենք ձեզ ուղարկած նամակի պատասխանին։

Ըրատնատէր հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

GRAND HOTEL

ԳՐԱՆԴ ՕՏԷԼ

Հիւրանոց

ԱԼԱ-ԷԴ-ԴՈՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ

ԹԷՀՐԱՆ

11—50

„ԳԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ“

Ղ. Ֆ.

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՍԱՐԻՈՅ

Հեղինակութիւն Լ. ՅԻՄԱՅԻ

Գինն է 60 կոպէկ

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарянцу.

Թիֆլիսում վաճառվում է նաև Կենդրոնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում։

7—10